Երկրորդ ընթերցում

Պ-392-07.10.2022-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) **46-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին մասով.**

«9.1. Սույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով սահմանված հիմքերով կարգավորող պետական մարմինը որոշում է մրցույթում հաղթող ճանաչված Հեռարձակողներին տրամադրել հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա:»:

Հոդված 2. Օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասը «սույն հոդվածով» բառերից հետո լրացնել «կամ 58-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ կետերով.

«6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անվավեր է ճանաչվել սույն օրենքի 46-րդ հոդվածի 9.1-ին մասով մրցույթում հաղթող ճանաչելու և լիցենզիան տրամադրելու որոշումը.

7) օրենքով սահմանված են լիցենզիայի գործողությունը դադարեցնելու այլ դեպքեր:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Եթե հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա տալու մասին կարգավորող պետական մարմնի որոշումը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անվավեր, ապա այդ որոշման անվավեր ճանաչվելու պահին հանրային մուլտիպլեքսի սլոթ օգտագործող Հեռարձակողը իր դիմումի հիման վրա նույն պայմաններով շարունակում է իրականացնել հեռարձակում մինչև օրենքով սահմանված կարգով սլոթի համար նոր մրցույթի արդյունքների ամփոփումը և լիցենզիայի տրամադրումը կամ դրա հիմնավոր մերժումը:»:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված՝ 58-րդ հոդվածի 7-րդ մասը գործում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա տալու մասին կարգավորող պետական մարմնի որոշումն անվավեր ճանաչված Հեռարձակողի նկատմամբ՝ դիմումի առկայության դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքը (այսուհետև՝ Օրենք) 46-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին մասով.

«9.1. Սույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով սահմանված հիմքերով, կարգավորող պետական մարմինը որոշում է մրցույթում հաղթող ճանաչված Հեռարձակողներին ~~տալ~~ տրամադրում~~ել է~~ Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա:»:

Հոդված 2. Օրենքի 51-րդ հոդվածը «սույն հոդվածով» բառերից հետո լրացնել «կամ 58-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով» բառերը:

Հոդված ~~2~~3. Օրենքի 58–րդ հոդվածի 3–րդ մասը՝

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6–րդ եւ 7–րդ կետերով .

«6) դատարանի օրինական ուժի մեջ մտած ~~որոշումով~~ դատական ակտով անվավեր է ճանաչվել սույն օրենքի 46-րդ հոդվածի 9.1-ին մասով տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու կամ ~~դրա տրման մասին որոշումը~~մրցույթում հաղթող ճանաչելու որոշումը և լիցենզիայի տրամադրումը.

7) օրենքով սահմանվել է լիցենզիայի գործողությունը դադարեցնելու այլ դեպքեր:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Եթե Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա տալու մասին կարգավորող պետական մարմնի որոշումը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անվավեր, ապա այդ որոշման անվավեր ճանաչվելու պահին Հանրային մուլտիպլեքսի սլոթ օգտագործող Հեռարձակողը (Հեռարձակողները)՝ իր դիմումի հիման վրա, նույն պայմաններով շարունակում է իրականացնել հեռարձակում՝ ~~պատշաճ հիմնավորված և պատճառաբանված չլինելու հիմքերով, դատարանի օրինակ ուժի մեջ մտած որոշումով ճանաչվել է անվավեր, ապա ազատ սլոթով հեռարձակումը նույն պայմաններով, իրենց դիմումի հիման վրա, իրականացնում են մինչ այդ լիցենզավորված Հեռարձակողները՝~~ մինչև օրենքով սահմանված կարգով սլոթի համար նոր մրցույթի արդյունքների ամփոփումը և լիցենզիայի ~~մրցույթում հաղթող ճանաչվելը~~տրամադրումը կամ դրա հիմնավոր մերժումը:»:

Հոդված ~~3~~4. Անցումային և եզրափակիչ դրույթներ

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

2. Սույն օրենքի ~~2~~3-րդ հոդվածով սահմանված՝ 58-րդ հոդվածի 7-րդ մասը ~~ով սահմանված հեռարձակումը շարունակելու իրավունքը~~ գործում է մինչև սույն օրենքի ~~ընդունումը~~ուժի մեջ մտնելը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով՝ Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա տալու մասին~~ամադրելու~~ կարգավորող պետական մարմնի որոշումն ~~ուժը կորցրած~~անվավեր ճանաչված Հեռարձակողի նկատմամբ՝ ~~ելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումների վրա՝ տվյալ Հեռարձակողի~~ դիմումի առկայության դեպքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ (Պ-392-07.10.2022-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացություն	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**«Տեսալողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենիքի նախագծի (այսուհետև՝ նախագիծ) 1-ին հոդված,**	«տալ» բառը փոխարինել « տրամադրել» բառով.	Ընդունվել է	Ընդունվել է
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**Նոր՝ հոդված 2.**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ հոդված, **Հոդված 2.** Օրենքի 51-րդ հոդվածը «սույն հոդվածով» բառերից հետո լրացնել «կամ 58-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով» բառերը: Համապատասխանաբար՝ հաջորդիվ համարակալումը փոխել	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ	**Նախագծի նոր 3-րդ**	6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Ընդունվել է	Ընդունվել է

	կառավարություն ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**հոդված, առաջին մաս**	«6) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անվավեր է ճանաչվել սույն օրենքի 46-րդ հոդվածի 9.1-ին մասով տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու կամ մրցույթում հաղթող ճանաչելու որոշումը և լիցենզիայի տրամադրումը.		
		Նախագծի նոր 3-րդ հոդված, երկրորդ մաս	7. Եթե Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա տալու մասին կարգավորող պետական մարմնի որոշումը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անվավեր, ապա այդ որոշման անվավեր ճանաչվելու պահին Հանրային մուլտիպլեքսի սլոթ օգտագործող Հեռարձակողը (Հեռարձակողները)՝ իր դիմումի հիման վրա, նույն պայմաններով շարունակում է իրականացնել հեռարձակում՝ մինչև օրենքով սահմանված կարգով սլոթի համար նոր մրցույթի արդյունքների ամփոփումը և լիցենզիայի տրամադրումը կամ դրա հիմնավոր մերժումը:»	Ընդունվել է	Ընդունվել է
4	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**Նախագծի նոր 4-րդ հոդված, 2-րդ մաս**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված՝ 58-րդ հոդվածի 7-րդ մասը գործում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով՝ Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա տալու մասին կարգավորող պետական մարմնի որոշումն անվավեր ճանաչված Հեռարձակողի նկատմամբ՝ դիմումի առկայության դեպքում:	Ընդունվել է	Ընդունվել է